ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ և ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀԽԳՀ-ԳՀՇՁԲ-21/5-1

ք. Երևան «17» հունիսի 2021թ.

Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի, ի դեմս գործադիր տնօրենի Զ. Մուրադյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ԱՁ «Սեյրան Սևոյան»-ն, ի դեմս տնօրեն Սեյրան Սևոյանի, որը գործում է ԱՁ «Սեյրան Սևոյան»-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է հավելվածների ծրագրային ապահովման մշակման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 6 690 000 (վեց միլիոն վեց հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը

հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել

ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **5** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ	ԱՁ «Սեյրան Սևոյան»
ՀՀ. ք. Երևան, Միհր Մկրտչյան 5, 0010	ք. Արտաշատ, Մարքսի 7,
«Կոնվերսբանկ» ՓԲԸ	հեռ: +374 94 58 22 10
Հ/Հ 1930058282670100	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ-ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00156064	Հ/Հ 220019803943000
Գործադիր տնօրեն՝ Զ. Մուրադյան	ՀՎՀՀ 47759998
	Տնօրեն՝ Ս. Սևոյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 17 » հունիսի 2021թ. կնքված
ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-21/5-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության								
							մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Ընդամենը գինը	ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը*
1	72211110/1	հավելվածների ծրագրային ապահովման մշակման ծառայություններ	Ներկայացվում է ստորև .	դրամ	6 690 000	1	ք. Երևան, Միեր Մկրտչյան 5	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից մինչև 30.09.2021թ.

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Կատարողը պետք է մինչև 2021 թվականի Սեպտեմբերի 30-ը Պատվիրատուի համար իրականացնի Հայաստանի գինիներ և գինու զբոսաշրջության բջջային հավելվածի մշակում և գործարկում:
Կատարողը պետք է ունենա android և ios հարթակներում հավելվածների և կայքերի մշակման/պատրաստման ոլորտում նվազագույնը 10 տարվա փորձ:
Բոլոր փաստաթղթերը, որոնք հավաստում են վերոնշյալը, պետք է ներկայացվեն պայմանագիրը կնքելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:
Պայմանագրի շրջանակներում իրականացվող բոլոր աշխատանքները, վերլուծությունները, հետազոտությունները, մշակված դիզայնների բոլորը տարբերակները և դրանց առնչվող փաստաթղթերն ու հաշվետվությունները, ինչպես նաև աշխատանքների իրականացման ընթացքում հավաքագրված այլ տեղեկատվություն հանդիսանում է Պատվիրատուի սեփականությունը և ենթակա չէ որևէ ձևով փոխանցման երրորդ կողմին առանց Պատվիրատուի համաձայնության:
Կատարողը պետք է իրականացնի ստորև նշված աշխատանքները երկու փուլով՝ բջջային հավելվածի ներկայացուցչական գործառույթ, այնուհետև գինեգործ/գաստրոբակների համար մշակված հավելվածի ինտերֆեյսի միջոցով ամրագրումների իրականացում:
Բջջային հավելվածի առաջին փուլի ներկայացուցչական մասը պետք է ներառի հետևյալ բաժինները.

1. Ինտերակտիվ քարտեզ Հայաստանի գինի արտադրող ընկերությունների և գաստրո բակերի: Քարտեզը պետք է բաղկացած լինի 2 մասից՝
ա) մարզերի գինու գործարաններ և գաստրոբակեր,
բ) Երևանի գինու մասնագիտացված խանութներ, գինու գործարաններ:
Ինտերակտիվ քարտեզագրումը ներառում է տեղեկատվության քայլեր ստեղծելու հնարավորություն, որոնք կարող են ցուցադրվել կամ թաքցվել կոճակի կիրառմամբ; տեքստերի ավելացում տվյալների կետերին, որոնք ցուցադրվում են արագ ամփոփում կամ նկարագրություն տալու համար; խոշորացնելու կամ հեռվացնելու գործառույթ, որ թույլ կտա կենտրոնանալ որոշակի տարածքի մանրամասների վրա կամ ստանալ ավելի լայն տարածաշրջանի ակնարկ՝ մոտակայքում գտնվող (nearby spots) հարակից ծառայությունների մասին տեղեկատվությամբ; կետերը կարող են կապված լինել արտաքին օժանդակ փաստաթղթերի հետ, ինչպիսիք են պատկերները, տեսանյութերը կամ գրաֆիկները: Մասնավորապես, քարտեզը պետք է ունենա եռամակարդակ զտիչի գործառույթ, այն է. ա) նախ դիտել օբյեկտի անունը pin (քորոց) – ի տեսքով, բ) նախադիտման և գ) առանձնացված էջի հնարավորություն:
2. Գինու ոլորտի նորությունների և հայտարարությունների բաժին՝ նորությունների մուտքագրման և խմբագրման պարզ ինտերֆեյսի հնարավորությամբ: Ինտերֆեյսի միջոցով հավելվածի կառավարիչը պետք է կարողանա տեղադրել տեքստային և մուլտիմեդիա տեղեկատվություն, որն անմիջապես հասանելի կլինի վերջնական օգտագործողին:
3. Գինու ոլորտի միջոցառումների բաժին՝ իրադարձությունների մուտքագրման և խմբագրման պարզ ինտերֆեյսի հնարավորությամբ: Ինտերֆեյսի միջոցով հավելվածի կառավարիչը պետք է կարողանա տեղադրել տեքստային և մուլտիմեդիա տեղեկատվություն միջոցառումների մասին որն անմիջապես հասանելի կլինի վերջնական օգտագործողին:
4. Գինու կրթություն/ կրթական բաղադրիչ. սննդի հետ համադրում, խաղողի սորտեր, գինու տեսակներ: Հավելվածում պետք է լինի հայկական գինիների մասին տեղեկատվություն ըստ կատեգորիաների (գինու տեսակի և խաղողի սորտի): Գինիների մասին տեղեկատվությունը, առաջարկվող սննդային համադրումներն ու շշերի նկարները կտրամադրվեն Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից: Գինեգործարանների առանձնացված էջերում ևս պետք է երևան տվյալ գինեգործարանի արտադրած գինիները:
Սննդի կատեգորիաների հետ պետք է առաջարկվի համապատասխան սորտի խաղող, տեսակի գինի և ցանկում առկա գինիները:
Աշխատանքների երկրորդ փուլում կատարողը պետք է մշակի
5. Բջջային հավելվածի միջոցով գինեգործական ընկերություններ և գաստրոբակեր այցեր ամրագրելու գործառույթ: Հավելվածի միջոցով վերջնական օգտագործողը պետք է կարողանա ամրագրել այց գինեգործարան/գաստրոբակերի կողմից տրամադրված օրացույցի հիման վրա: Ամրագրման դեպքում գինեգործարան/գաստրոբակերը պետք է ստանան ծանուցում էլ-հասցեին և կարողանան հաստատել կամ մերժել այցը: Այցի հաստատման/մերժման դեպքում օգտատերը ստանում է ծանուցում:

Բջջային հավելվածի դիզայնը և օգտագործվող հաղորդակցության տարրերը պետք է լինեն Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի կողմից տրամադրված «Հայաստանի գինիներ» հովանոցային բրենդի ոճին և գունային վահանակին համապատասխան:
Ներկայացված գործառնական պահանջների հիման վրա կատարողը պետք է ներկայացնի հավելվածի նախնական կառուցվածքը և դիզայնը և Պատվիրատուի կողմից հաստատելու դեպքում իրականացնի դիզայն, մոդելավորում և մշակում:
Բջջային հավելվածի նախնական տարբերակը պետք է ներկայացվի Պատվիրատուին հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով մինչև սույն թվականի Հուլիսի 15-ը: Պատվիրատուն կկատարի դիտարկումներ և մեկնաբանություններ նախնական տարբերակի ստացման օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում, որի հիման վրա առաջարկվող գործառույթները և/կամ տեղեկատվությունը պետք է լրամշակվի Կատարողի կողմից և հավելվածը գործարկվի

- առաջին փուլի գործառույթներով մինչև սույն թվականի օգոստոսի 15-ը
- վերջնական տեսքով (առաջին և երկրորդ փուլերի ամբողջական գործառույթներով) մինչև ս.թ. սեպտեմբերի 30-ը:

Պատվիրատուի կողմից հավելվածի ընդունումից հետ Կատարողը մեկ օրացույցային տարի կտրամադրի անվճար սպասարկում:
Բջջային հավելվածը պետք է մշակվի android և ios համակարգով աշխատող բջջային հեռախոսների և պլանշետների համար: Այն պետք է ունենա responsive դիզայն, այն է կախված այցելուի սարքի էկրանի չափից՝ դինամիկ կերպով կընդունի համապատասխան օպտիմիզացված ձևաչափ:
Հավելվածում պետք է լինի խելացի որոնողական համակարգ և ֆիլտրացիաներով գինեգործարան/գաստրոբակերի/գինիների ներկայացում (ըստ խաղողի սորտի, հեռավորության, և այլն): Որոնման արդյունքները պետք է ներկայացվեն ըստ բաժինների:
Օգտագործողը պետք է կարողանա ընտրել հավելվածի նախապատվելի ծանուցումներն ըստ բաժինների (push notification-ներով):
Հավելվածը պետք է ունենա տարբեր ֆոտո և վիդեո տեղադրելու հնարավորություն:
Բջջային հավելվածը ներբեռնելուց պետք է առաջարկի մուտք գործել սոց. հարթակների տվյալներով կամ գրանցվել էլ. հասցեով: Վերջնական օգտագործողին պետք է հնարավորություն տրվի բաց թողնել մուտք գործել/գրանցվելու առաջարկը:
Հավելվածի միջոցով այց պատվիրելու դեպքում վերջնական օգտագործողը պետք է մուտք գործի համակարգ: Մուտք գործելու տարբերակները պետք է ներառեն էլ. հասցեով գրանցում կամ սոց հարթակներով (Facebook, Google) մուտք և հեռախոսահամարի պարտադիր տրամադրում:
Պատվիրատուին պետք է տրամադրվի վերջնական օգտագործողների գործողությունների, այցերի, գնումների, վիճակագրական տվյալների վերլուծության պարզ ինտերֆեյսով հարթակ, որը կլինի հեշտ կիրառելի ոչ տեխնիկական գիտելիքներ ունեցող մարդկանց համար:
Ծրագրավորման տեխնիկական պահանջներն են .
Լեզուն պետք է լինի PHP, Տվյալների բազան՝ MySQL: Սերվերային օպերացիոն համակարգը պետք է լինի Linux (ցանկացած տեղաբաշխում): Դիմային մասի (Front-end) գրադարանը պետք է լինի React կամ Vue:
iOS օպերացիոն համակարգի համար ծրագրավորման լեզուն պետք է լինի Swift, նվազագույն աջակցվող օպերացիոն համակարգի տարբերակը՝ iOS 11, իսկ քարտեզների գրադարանը՝ Google Maps, Yandex Maps կամ Mapbox:
Android օպերացիոն համակարգի համար ծրագրավորման լեզուն պետք է լինի Kotlin, նվազագույն աջակցվող օպերացիոն համակարգի տարբերակը՝ Android 9, իսկ քարտեզների գրադարանը՝ Google Maps, Yandex Maps կամ Mapbox:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ	ԱՁ «Սեյրան Սևոյան»
ՀՀ. ք. Երևան, Մհեր Մկրտչյան 5, 0010	ք. Արտաշատ, Մարքսի 7,
«Կոնվերսբանկ» ՓԲԸ	հեռ: +374 94 58 22 10
Հ/Հ 1930058282670100	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00156064	Հ/Հ 220019803943000
Գործադիր տնօրեն՝ Հ. Մուրադյան	ՀՎՀՀ 47759998
	Տնօրեն՝ Ս. Սևոյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 2
«17» հունիսի 2021թ. կնքված
ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-21/5-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Ընդամենը
1	72211110/1	հավելվածների ծրագրային ապահովման մշակման ծառայություններ	0	0	0	0	0	0	0	0	6 690 000	6 690 000	6 690 000	6 690 000	6 690 000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամ
ՀՀ. ք. Երևան, Մհեր Մկրտչյան 5, 0010
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930058282670100
ՀՎՀՀ 00156064
Գործադիր տնօրեն՝ Հ. Մուրադյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

ԱՁ «Սեյրան Սևոյան»
ք. Արտաշատ, Մարքսի 7,
հեռ: +374 94 58 22 10
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 220019803943000
ՀՎՀՀ 47759998
Տնօրեն՝ Ս. Սևոյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
« » հունիսի 2021թ. կնքված
ՀԽԳՀ-ԳՀՇՁԲ-21/5-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
Հայաստանի խաղողագործության և
գինեգործության հիմնադրամ
ՀՀ. ք. Երևան, Միհեր Մկրտչյան 5, 0010
Հ/Հ 1930058282670100
ՀՎՀՀ 00156064

Պատվիրատու
_____
_____
գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
« » հունիսի 2021թ. կնքված
ՀԽԳՀ-ԳՀԾՁԲ-21/5-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի հասարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն